Հաշվետվություն

Սպորտի ոլորտ

ՀՀ Լոռու մարզում գործում են 19 մարզադպրոց, 3 մարզական ակումբ, մարզական հասարակական կազմակերպություններ: Տարբեր մարզական թիմերում և խմբակներում ընդգրկված են մոտ 7000 երեխա:

- Մարզի տարածաշրջաններում ապա Վանաձորում կազմակերպվել են ՀՀ ԱԺ Գավաթի խաղարկության մրցումները՝ 1-6-րդ դասարանցիների միջև: 3 Դպրոցականներ առանձին մարզաձևերում ճանաչվել են հաղթող:
  - 2019թ. մարտի 3-ին Թեժ լեռան հովտում կազմակերպվել և անց է կացվել <<Լոռվա ձմեռ-2019>> 48-րդ ավանդական մարզատոնահանդեսը:

Կազմակերպչական և տեղեկատվական աշխատանքներին ցուցաբերվել է աջակցություն:

- Ձևավորվել է պետական մարմինների միջև անցկացվող «Հրաձգություն» մրցույթի մասնակից Լոռու մարզպետարանի թիմը:
- Կազմակերպվել են անկախության 28-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների ամենամյա մարզական խաղերը /11 մարզաձևից/: Սեղանի թենիս տղաներ, ձեռքի գնդակ տղաներ, ֆուտզալ մարզաձևերում լոռեցիները դարձել են հաղթող: Ունեցել ենք նաև 4 երկրորդ և 3 երրորդ տեղ:
- Կազմակերպվել է հանրակրթական դպրոցների սովորողների 4-րդ ուսումնամարզական խաղերը: Մարզի հավաքական թիմը դարձել է Հանրապետության չեմպիոն /երկրորդ անգամ/:
- «Քաղաքացու օր» տոնակատարության շրջանակներում կազմակերպվել են վազքարշավ, հանդիպում Երևանի և Վանաձորի ուսանողների հետ, ինչպես նաև հանրային քննարկում:
- Կազմակերպվել է 1-3-րդ և 4-7-րդ դասարանցիների «Սպորտլանդիա», ՆՈՒՀ-երի «Սպորտլանդիա» մարզական միջոցառումների տարածաշրջանային և մարզային փուլերը հաղթողները մասնակցել են հանրապետական փուլերին:
  - Կազմավորվել է Համահայկական 7-րդ ամառային խաղերի մասնակցող մարզի պատվիրակությունը /235 մասնակից՝ մարզիկներ և պատվիրակներ/:

Լոռեցիները տարբեր մարզաձևերում նվաճել են 27 մեդալ / 10 ոսկե, 7 արծաթե և 10 բրոնզե/:

- Կազմակերպվել է «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթը, որի մարզային փուլի հաղթող ընտանիքները, Ծաղկաձորում մասնակցել են եզրափակիչ փուլին:Մրցույթում առանձին ձևերում լոռեցիները գրանցեցին 1 առաջին, 2 երկրորդ, 5 երրորդ տեղ, ընդհանուր հաշվարկում Հանիսյանների ընտանիքը գրավել է երրորդ տեղ:
- Մարզի 7 համայնքներում կազմակերպվել է մարզական փառատոն միջոցառումը՝ որն ունեցել է շուրջ 7 հազար մասնակից: Վանաձորում կազմակերպված մարզական փառատոնը 5-րդ անգամ հանրապետությունում ճանաչվել է լավագույնը:
- Կազմակերպվել է «Լավագույն հաշմանդամ մարզիկ» մրցույթի Լոռու մարզային փուլը, որի արդյուքում ձևավորված մարզի հավաքական թիմը 4-րդ տարին անընդմեջ հանրապետական փուլում գրավել է 1-ին տեղ:
- Կազմակերպվել է տարեցների մարզական խաղերի Լոռու մարզային փուլը, որի արդյունքում ձևավորված հավաքական թիմը մասնակցել է Ծաղկաձորում կայացած հանրապետական եզրափակիչ փուլին:
- ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համատեղ Վանաձորում կազմակերպվել է գյուղական մարզական խաղերի եզրափակիչ փուլը, որտեղ մարզի աղջիկների թիմը գրավել է երկրորդ , իսկ տղաների թիմը երրորդ տեղ, ընդհանուր հաշվարկով մարզը զբաղեցրեց երրորդ հորիզոնականը:
- Հոկտեմբերին կազմակերպվել է ռազմամարզական խաղերի տարածաշրջանային և մարզային փուլերը: Ապահովվել է հաղթող թիմի մասնակցությունը եզրափակիչ փուլին:
- Կազմավորվել են ՀՀ Լոռու մարզի հավաքական թիմերը, որոնք մասնակցել են 8-12-րդ դասարանցիների համար կազմակերպվող «Սպարտակիադա» մրցույթի եզրափակիչ փուլին:Սեղանի թենիս տղաներ, շախմատ աղջիկներ, վոլեյբոլ տղաներ մարզաձևերում մեր թիմերը գրավել են առաջին տեղ, ունեցել ենք նաև 4 երկրորդ և 2 երրորդ տեղ՝ ընդհանուր թիմային պայքարում մարզը գրավել է մրցանակային երրորդ տեղ:
    - 2019թ ՀՀ Լոռու մարզպետի որոշմամբ /16.11.2019թ 628-Ա/ ՀՀ Լոռու մարզում երիտասարդության հետ կապված հարցերի համակարգման նպատակով ստեղծվել է մարզպետին կից երիտասարդական աշխատանքային խումբ:

Վերոնշյալ խմբի կազմակերպած ծրագրի շրջանակում երիտասարդները դեկտեմբեր ամսին այցել են ՀՀ ՊՆ մարտական դիրքեր՝ ծանոթացել զինվորների առօրյային:

- Երիտասարդ ստեղծագործողներին ճանաչելի դարձնելու նպատակով /երիտասարդ գեղանկարիչների մասնակցությամբ/ կազմակերպվել է «Իմ Լոռի» խորագիրը կրող նկարչական ծրագիրը, որի արդյունքում ստեղծված նկարները ցուցադարվում են ՀՀ Լոռու մարզպետարանում:

- «Կամք» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ- կողմից Ստեփանավանում կազմակերպվել է «Ծրագրի մշակման և կառավարման հմտություններ» ծրագիրը:

Անցկացվել է 5-օրյա դասընթաց, որի նպատակն էր՝ ծրագիր մշակելու և կառավարելու հմտությունների զարգացման միջոցով նպաստել շահառու երիտասարդների անհատական ու սոցիալական զարգացմանը, նրանց ակտիվ քաղաքացիությանը և մասնակցությանը համայնքային կյանքին ծրագրերի մշակման ու իրականացման միջոցով:

- Նոյեմբերին Վանաձորի «Կույրերի միավորման» հետ համատեղ կազմակերպվել է կույր շաշկիստների և շախմատիստների առաջնություն: Մրցանակային տեղեր գրաված մարզիկներին տրվել են դրամական պարգևներ:

- Դեկտեմբերին «Լուսաստղ» ԲՀԿ-ի հետ համատեղ Վանաձորի Երկաթուղայինների այգում գործող «Լոռի» ժամանցի կենտրոնում կազմակերպվել է «Մեր հնարավորությունները» խորագիրը կրող մարզա-մշակութային միջոցառումը:

- Դեկտեմբերին Դիլիջանում կայացած «Հերոսի գավաթ» անվանումը կրող ռազմամարզական խաղերին ՀՀ Լոռու մարզը ներկայացրել է Մարգահովիտի միջնակարգ դպրոցը: Միավորների վերջնական հաշվարկում լոռեցիները գրավել են պատվավոր երկրորդ տեղը:

- ՀՀ Լոռու մարզպետարանի նիստերի դահլիճում պարբերաբար կազմակերպվում են միջազգային մրցասպարեզներում հաջողություններ գրանցած մարզիկների և նրանց մարզիչների պարգևատրման արարողություններ:

Դեկտեմբերի 24-ին ամփոփվեց մարզական տարին և տարվա ընթացքում լավագույն արդյունքներ գրանցած մարզիկներն ու նրանց մարզիչները պարգևատրվեցին ՀՀ Լոռու մարզպետի շնորհակալագրերով և դրամական պարգևներով: